ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 սեպտեմբերի 2024 թվականի N 1164-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 581-Ա որոշմամբ Արմավիր քաղաքի Չարենցի փողոցի թիվ 20 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող 20,0 (քսան) քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով 5 (հինգ) տարի ժամկետով հատկացվել է քաղաքացի Արտակ Ավագյանին, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և Արտակ Ավագյանի միջև 2010 թվականի նոյեմբերի 18-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ /սեղ. նո 5763/:

Այնուհետև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2017 թվականի հուլիսի 26-ի թիվ 289-Ա որոշմամբ Արմավիր քաղաքի Չարենցի փողոց թիվ 20 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող 20,0 քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը երկարացվել է մինչև 18.11.2022 թվականը, համաձայն որի Արմավիրի համայնքապետարանի և Արտակ Ավագյանի միջև 2017 թվականի հուլիսի 27-ին կնքվել է հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր՝ /սեղ. նո 4227/:

2022 թվականի հունիսի 07-ին քաղաքացի Արտակ Սամվելի Ավագյանը հողամասի կառուցապատման իր իրավունքը վաճառել է քաղաքացի Ալիկ Ալեքսանի Շահինյանին/հիմք՝ Հողամասի կառուցապատման իրավունքի առուվաճառքի պայմանագիր՝ /սեղ. նո 3178/:

2022 թվականի սեպտեմբերի 19-ին քաղաքացի Ալիկ Ալեքսանի Շահինյանը հողամասի կառուցապատման իր իրավունքը վաճառել է քաղաքացի Նելլի Սերգեյի Մովսիսյանին/հիմք՝ Հողամասի կառուցապատման իրավունքի առուվաճառքի պայմանագիր՝ /սեղ. նո 5692/:

Հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը լրացել է:

Քաղաքացի Նելլի Մովսիսյանը մինչ օրս բարեխղճորեն և լրիվ ծավալով կատարել է իր՝ կառուցապատողի պարտականությունները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 441-րդ, 466-րդ, 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի քաղաքային համայնքի և քաղաքացի Արտակ Ավագյանի միջև 2010 թվականի նոյեմբերի 18-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի 9.1 կետը, 2017 թվականի հուլիսի 27-ին Արմավիրի համայնքապետարանի և Արտակ Սամվելի Ավագյանի միջև կնքված հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիրը, 2022 թվականի հունիսի 07-ին կնքված Արտակ Սամվելի Ավագյանի և Ալիկ Ալեքսանի Շահինյանի միջև կնքված հողամասի կառուցապատման իրավունքի առուվաճառքի պայմանագիրը, 2022 թվականի սեպտեմբերի 19-ին Ալիկ Ալեքսանի Շահինյանի և Նելլի Սերգեյի Մովսիսյանի միջև կնքված հողամասի

գատման իրավունքի առուվաճառքի պայմանագիրը, ընդառաջելով քաղաքացի Նելլի Մովսիսյանի 2024 թվականի սեպտեմբերի 09-ի թիվ 5039 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի քաղաքային համայնքի և Արտակ Ավագյանի միջև 2010 թվականի նոյեմբերի 18-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրում՝ /սեղ.նո 5763/ կատարել փոփոխություններ.

1) Պայմանագրում՝ կառուցապատման իրավունք ունեցող անձ՝ «Արմավիր քաղաքի, Աբովյան փողոց, 5 նրբանցք, 2 տան բնակիչ՝ Արտակ Ավագյան» բառերի փոխարեն կարդալ՝ «քաղաքացի Նելլի Սերգեյի Մովսիսյան, ծնված՝ 20.08.1977 թվականին, նույնականացման քարտ՝ 010789659, տրված՝ 15.07.2019 թվականին՝ 048-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, քաղաք Արմավիր, Հանրապետության փողոց, 21Ա շենք, 7 բնակարան» բառերը:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 18.11.2029 թվականը:

3) Պայմանագրի 1.1 կետում «5000 (հինգ հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «12000 (տասներկու հազար)» բառերը:

4) Պայմանագրի 5.1 կետում «100000 (մեկ հարյուր հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «240000 (երկու հարյուր քառասուն հազար)» բառերը:

2. Իրավաբանական բաժնին՝ քաղաքացի Նելլի Սերգեյի Մովսիսյանի հետ կնքել համաձայնագիր՝ 2010 թվականի նոյեմբերի 18-ին՝ /սեղ. նո 5763/ կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 10
ք. Արմավիր